ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N209-Ա

«10» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարություն 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման 1-ին կետով, ««Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1715-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի

հոկտեմբերի 5-ի թիվ 1715-Ն որոշումներով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարից՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված քաղաքացիներին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի հաշվառման կետից Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրեր տեղափոխման նպատակով Վայքի համայնքապետարանի կողմից ձեռք բերված և տրանսպորտային միջոցներին տրամադրված վառելիքի /բենզին և դիզելային վառելիք/ համար Վայքի համայնքապետարանին հատկացնել 817 000 (ութը հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն ներկայացված փաստաթղթերի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

10/10/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

[illegible]